

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ  
ԵՒ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶԻ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ ԵՒ ԿԸ ԲԱՐՈՁԷ  
ՊԸՐՊԵՆՔԻ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՁ  
ԵՒ ՕԾՈՒՄ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿԻՈՆԵԱՆԻ  
ՁՕՆՈՒԿ ԶՈՒՇԱՐԶԱՆ-ԽԱԶՔԱՐԻ

Գոհուանկութեամբ կը հաղորդենք, որ Կիրակի, Փետրուար 14ը հոգեկան հրճուանքի օր մը եղաւ Պըրպէնքի Հայց. Եկեղեցւոյ Ծուխի հաւատացեալներուն համար, որովհետեւ Բուն Բարեկենդանն ու Տեառնընդառաջը միասնաբար տօնախմբուեցան Առաջնորդ Սրբազան Հօր հանդիսապետութեամբ: Օրուան Սուրբ Պատարագը մատոյց Ծուխին Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Խաժակ Քինյ. Շահպազեան: Առաջնորդ Սրբազան Հայրը տուաւ ոգեւորիչ պատգամ մը՝ շեշտելով աղօթքին եւ ծոմապահութեան կարեւորութիւնը:

Սուրբ Պատարագի աւարտին Սրբազան Հօր գլխաւորութեամբ Հոգեհանգստեան Մասնաւոր Պաշտօն կատարուեցաւ ճորճ Գրաճեանի եւ այլ ննջեցեալներու հոգիներուն համար: Ապա Դպրաց Դասի «Ուրախ չեր» շարականի երգեցողութեամբ, Սրբազան Հայրն ու հոգեւորականները թափօրով առաջնորդուեցան դուրս եւ հաւաքուեցան Սուրբ Վարդան Զօրավարի Յուշարձան-Խաչքարի շուրջ, ուր Սրբազան Հօր կողքին էին խաչքարի բարերարներ՝ Ժագ եւ Վահէ Գրաճեաններ, Տիկին Արտեմիս Գրաճեան, Սիլվա Գրաճեան եւ իր երկու թոռնիկները: Սրբազան Հայրը հոգեւորականներու եւ Դպրաց Դասի մասնակցութեամբ Սրբալոյս Միռոնով Օճեց Սուրբ Վարդան Զօրավարի Յուշարձան-Խաչքարը: Ապա իր երախտագիտութիւնը յայտնեց Գրաճեան ընտանիքի անդամներուն, որոնք ի յիշատակ իրենց հօր՝ ճորճ Գրաճեանի եւ որպէս ձօն՝ իրենց սիրելի մօր՝ Տիկին Արտեմիս Գրաճեանի, որոնք խաչքարին բարերարները հանդիսացած էին: